



ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԿԵՆՍԱՊԱՅՍԱՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ – 2010

Թողարկման պատասխանատուներ՝

*ԼՂՀ Վիճակագրության
պետական խորհրդի անդամ
Ի. Ավանեսյան*

*ԼՂՀ ԱՎԾ նախագահի տեղակալ
Կ. Առուշանյան*

*ԼՂՀ ԱՎԾ համակարգչային
սպասարկման բաժնի պետ
Ի. Մելքույան*

*ԼՂՀ ԱՎԾ սոցիալ-ժողովրդագրության և աշխատանքի
շուկայի վիճակագրության բաժնի պետ
Լ. Պետրոսյան*

ԼՂՀ ԱՎԾ տարածքային բաժինների պետեր

Հեռախոս՝ 94-33-72

Էլեկտրոնային փոստ՝ artsakhstat@karabakh.net

Ինտերնետի էջ www.stat-nkr.am

Թուղթ օֆսեթ 1: Չափսերը՝ 21x29,7: Տպաքանակը 50 օրինակ:

Հանձնված է տպագրության 2010թ. օգոստոսին

Բովանդակություն

1. Ներածություն	4
2. Հետազոտության մեթոդաբանությունն ու գործիքները	5
3. Նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն	6
3.1. Ընտրանք	6
3.2. Մասնակցություն հարցումներին	7
3.3. Հետազոտվածների որոշ ժողովրդագրական ցուցանիշներ	7
3.4. Կրթություն	13
3.5. Երեխաների առկայություն	17
3.6. Բնակարանային և բնակության պայմաններ	26
3.7 Ամուսնական զույգերի ապահովվածությունը անշարժ գույքով և երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքներով	34
3.8. Ամուսնական զույգերի պարտքերը և խնայողությունները	39
3.9. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը	42
3.10. Չբաղվածություն	50
3.11. Նորաստեղծ ընտանիքների խնդիրներն ու սպասումները	52
Հավելված - Հետազոտության հարցաթերթը և դրա լրացման հրահանգը	56

1. Ներածություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը 2010թ մայիս-հունիս ամիսներին իրականացրել է նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն (այսուհետ՝ հետազոտություն)՝ համաձայն 2010թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի:

Հետազոտության նպատակը հանրապետությունում 2008-2009թթ իրենց ամուսնությունը գրանցած արցախյան ընտանիքների կենսապայմանները բնութագրող ցուցանիշների առավել ընդգրկուն համակարգով տեղեկատվական համակարգի ձևավորումն է:

Որպես այդպիսին՝ սույն ընտրանքային հետազոտությունն առաջին անգամ է անցկացվել հանրապետությունում:

Ցանկացած հասարակության բարեկեցության հիմքը նրա սկզբնական բջջի՝ ընտանիքի բարեկեցությունն է: Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի՝ պետության ժողովրդագրական հիմքը առողջ և ամուր ընտանիքն է, որում դաստիարակվում են հասարակության լիիրավ անդամներ: Հանրայնացման գործընթացը սկսվում է ընտանիքում, որում երեխան ստանում է առաջին պատկերացումը հասարակությունում ընդունված նորմերի, հիմնական արժեքների, սովորությունների և վարքի մասին, զարգացնում է կենսունակությունը և հիմք դնում անհատի հետագա զարգացման համար:

Այնհայտ է, որ պետությունը չի կարող իրացնել ընտանիքի գործառույթները, սակայն կարող է ստեղծել պայմաններ, որում ընտանիքը կկարողանա բավարարել իր կարիքները և լավագույնս իրացնել իր գործառույթները: Ուստի պետության խնդիրներից մեկը ընտանիքի դերի ուժեղացումն ու ընտանիքի արժեքների պահպանումն է: Ընտանիքի վերարտադրողական վարքի, վերջինիս վրա ազդող գործոնների նաև պետական միջամտությամբ կարգավորումը կարևոր է այն պատճառով, որ ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրագործման ընթացքում առավելագույնս հաշվի առնվեն ընտանիքում գործառվող հիմնական սկզբունքները, մոտեցումները, առկա խնդիրներն ու տրամադրությունները:

Սույն հետազոտությունը հնարավորություն կտա նաև գնահատել պետության կողմից վերջին տարիներին որդեգրած քաղաքականության արդյունքները, բացահայտել դրա զարգացման հետագա ուղղությունները:

Աշխատանքները կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կողմից տրամադրված՝ ընտրանքի համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների հիման վրա: Հետազոտությունն անցկացվել է հանրապետության մայրաքաղաքում և բոլոր շրջաններում:

Հետազոտության հարցաթերթը, նախքան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվելը, փորձաքննության է ուղարկվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն:

Հետազոտության մեթոդաբանության շահագրգիռ քննարկման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը իր երախտագիտությունն է հայտնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը, իսկ հետազոտության կարևորության գիտակցման ու հարցաթերթերի հարցերին տրված անկեղծ պատասխանների համար՝ հետազոտված ընտանիքներին:

Հուսով ենք, որ սույն զեկույցում զետեղված նյութերն օգտակար կլինեն արցախյան ընտանիքների, մասնավորապես, նոր ստեղծված ընտանիքների սոցիալական և բարոյահոգեբանական խնդիրների լուծման քաղաքականությունը մշակողների, իրագործողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

2. Հետազոտության մեթոդաբանությունն ու գործիքները

Հետազոտությունն իրականացվել է Լեռնային Գարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից 2010թ մայիսի 21-ի N10 որոշմամբ հաստատված հարցաթերթով:

Նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների դիտարկման ամբողջ գործընթացն իրականացվել է Լեռնային Գարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների (այսուհետ՝ հարցազրուցավարներ) կողմից:

Մինչ այդ, հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով, իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվական քաղաները:

Հրահանգավորման ընթացքում, հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթերում ներառված ցուցանիշների լրացման, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Մանրամասն պարզաբանումներ են տրվել նաև նորաստեղծ ընտանիքների կողմից հարցաթերթի լրացմանը մասնակցելուց հրաժարվելու և այլ դեպքերի ժամանակ հարցաթերթերի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու, ինչպես նաև հարցաթերթերում զետեղված հարցերին պատասխանելուց հրաժարվելու, մասնակիորեն պատասխանելու և (կամ) այլ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով ԼԳՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության և դրա նպատակների պարզաբանման, հարցաթերթերի լրացման առումով հետազոտության մեջ ընդգրկված ընտանիքների ակտիվության բարձրացման և վերջիններիս կողմից գործուն օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների: Հարցազրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը թվաբանական և տրամաբանական ստուգման ենթարկվելուց հետո ենթարկվել են համակարգչային մշակման, որի արդյունքում ստացվել են ելքային աղյուսակներ:

2008-2009թթ. հանրապետությունում գրանցված ամուսնությունների թիվը ըստ ԼԳՀ արդարադատության նախարարության ներկայացրած ակտերի տվյալների կազմել է 4004:

Աղյուսակ 2.1. 2008-2009թթ գրանցված ամուսնությունների թիվը ըստ շրջանների

Շրջանները	Գրանցվել են 2008թ	Գրանցվել են 2009թ	Ընդամենը	տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	3057	947	4004	100.0
ք. Ստեփանակերտ	1238	343	1581	39.5
Ասկերան	352	84	436	10.9
Հաղրուք	240	48	288	7.2
Մարտակերտ	433	144	577	14.4
Մարտունի	395	148	543	13.6
Շահումյան	61	24	85	2.1
Շուշի	170	28	198	4.9
Քաշաթաղ	168	128	296	7.4

Հետազոտությամբ ընդգրկվել է 400 ընտանիք՝ 2008-2009թթ գրանցված ընտանիքների ընդհանուր թվի 10.0 տոկոսը: Ընտրանքում ընդգրկվածության նշված չափը պահպանվել է ըստ տարածքային բաշխվածության:

3. Նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն

3.1. Ընտրանք: Հարցումն անց է կացվել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների 400 նոր ստեղծված ընտանիքների շրջանում՝ ընտրված պատահական ընտրանքային կարգով:

Աղյուսակ 3.1.1. Հետազոտությունում ընդգրկված ամուսնական զույգերն ըստ շրջանների

Շրջանները	Ընտրանքում ընդգրկվածները	տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	400	100.0
ք. Ստեփանակերտ	158	39.5
Ասկերան	43	10.7
Հաղբուք	29	7.3
Մարտակերտ	57	14.3
Մարտունի	54	13.5
Շահումյան	9	2.2
Շուշի	20	5.0
Քաշաթաղ	30	7.5

Հարցվածների 39.5 տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտ քաղաքին, 14.3 տոկոսը՝ Մարտակերտի շրջանին, 13.5 տոկոսը՝ Մարտունու շրջանին, 10.7 տոկոսը՝ Ասկերանի շրջանին, 7.5 տոկոսը՝ Քաշաթաղի շրջանին, 7.3 տոկոսը՝ Հաղբուքի շրջանին, 5.0 տոկոսը՝ Շուշիի շրջանին և 2.2 տոկոսը՝ Շահումյանի շրջանին:

Հետազոտության համար նախատեսված ընտրանքը պահպանվել է նաև քաղաք-գյուղ կտրվածքով: Այսպես, ուսումնասիրվող ժամանակահատվածում գրանցված ամուսնական զույգերից 2292-ը քաղաքաբնակ են, 1712-ը՝ գյուղաբնակ: Արդյունքում հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերից 57.2 տոկոսը քաղաքաբնակ են, 42.8 տոկոսը՝ գյուղաբնակ: Բոլոր շրջաններում գերակշռել են գյուղաբնակ ամուսնական զույգերի տեսակարար կշիռները՝ 66.7 տոկոսից մինչև 83.7 տոկոսը, բացառությամբ Շուշիի շրջանից, որտեղ գյուղաբնակների տեսակարար կշիռը կազմել է շրջանի ընտրանքում ընդգրկվածների 10 տոկոսը:

Աղյուսակ 3.1.2. Հետազոտությունում ընդգրկված ամուսնական զույգերն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի

Շրջանները	քաղաքային	գյուղական	տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	
			քաղաքային	գյուղական
Ընդամենը	229	171	57.2	42.8
ք. Ստեփանակերտ	158	-	100.0	-
Ասկերան	7	36	16.3	83.7
Հաղբուք	6	23	20.7	79.3
Մարտակերտ	14	43	24.6	75.4
Մարտունի	14	40	25.9	74.1
Շահումյան	3	6	33.3	66.7
Շուշի	18	2	90.0	10.0
Քաշաթաղ	9	21	30.0	70.0

3.2. Մասնակցություն հարցումներին: Հետազոտության մեջ ընդգրկված 400 ամուսնական զույգերից հարցումներին մասնակցել են 395-ը կամ 98.7 տոկոսը: 5 ամուսնական զույգ կամ հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերի 1.3 տոկոսը հրաժարվել են պատասխանել հարցաթերթի հարցերին:

Աղյուսակ 3.2.1. Հարցագրույցի արդյունքները ըստ շրջանների

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրոթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Հարցաթերթը լրացվել է	395	157	42	26	57	54	9	20	30
Տանը չեն հանդիպել (նշել պատճառը)	-	-	-	-	-	-	-	-	-
Ստացվել է մերժում	5	1	1	3	-	-	-	-	-
Չեն կարողացել պատասխանել հարցերին	-	-	-	-	-	-	-	-	-
Հարցերին ամբողջությամբ պատասխանել է այլ անձ	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	400	158	43	29	57	54	9	20	30

3.3 Հետազոտվածների որոշ ժողովրդագրական ցուցանիշներ Ամուսնական զույգերի հարցումներից պարզվել է, որ 45.6 տոկոսը հանդիսանում են 12-ից 24 ամսվա ամուսնացածները, 40.3 տոկոսը՝ ամուսնացած են 24 ամսից ավելի, 3.5 տոկոսը՝ մինչև 9 ամիս:

Հարցվածների 23.0տոկոսը ամուսնացել են արցախյան մեծ հարսանիքի ժամանակ:

Եթե Շահումյանի, Հաղրոթի, Մարտակերտի, Մարտունու և Ասկերանի շրջաններում գերակշռում են 24 ամսից ավելի ամուսնացածները՝ 42.9 տոկոսից մինչև 66.7 տոկոսը, ապա Ստեփանակերտում և Շուշիում մեծամասնություն են կազմել 12-24 ամսվա ամուսնացածները՝ համապատասխանաբար 55.4 տոկոսը և 50.0 տոկոսը: Քաշաթաղի շրջանում 12-ից 24 ամիս և 24 ամսից ավելի ամուսնացածները կազմել են 46.7-ական տոկոս: Մինչև 9 ամիս ամուսնացածները կազմել են 14 ամուսնական զույգ, որոնց ներկայացուցիչները բացակայում են Շահումյանի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում:

Աղյուսակ 3.3.1. Ամուսնական զույգերն ըստ ամուսնության ժամկետի՝ շրջաններով

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրոթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
մինչև 9 ամիս	3.5	4.5	7.1	3.8	1.8	3.8	-	-	-
9-12 ամիս	10.6	14.0	9.5	-	14.0	7.4	11.1	5.0	6.6
12-24 ամիս	45.6	55.4	40.5	34.6	33.3	40.7	22.2	50.0	46.7
24 ամսից ավելի	40.3	26.1	42.9	61.6	50.9	48.1	66.7	45.0	46.7

Ամուսնական գույգերի հարցումներից պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած 395 ընտանիքներում բնակվում է շուրջ 1909 մարդ, որից 1435-ը հանդիսանում են 18 տարեկան և բարձր տարիքի, այլ կերպ տնային տնտեսությունների անդամների 24,8 տոկոսը երեխաներ են:

Միջին հաշվով մեկ տնային տնտեսությունում բնակվում է 4.8 մարդ, որից 3.6-ը՝ հանդիսանում են 18 տարեկան և բարձր տարիքի:

Աղյուսակ 3.3.2. Տնային տնտեսության անդամների տարիքային բաշխվածությունը շրջաններով

Շրջաններ	Ընդամենը, մարդ	այդ թվում՝ 18 տարեկան և բարձր տարիքի	Միջինը 1 տնային տնտեսության հաշվով, մարդ	այդ թվում՝ 18 տարեկան և բարձր տարիքի
Ընդամենը	1909	1435	4.8	3.6
ք. Ստեփանակերտ	705	558	4.5	3.6
Ասկերան	203	163	4.8	3.9
Հաղրուք	132	95	5.1	3.7
Մարտակերտ	313	209	5.5	3.7
Մարտունի	291	236	5.4	4.4
Շահումյան	28	20	3.1	2.2
Շուշի	96	60	4.8	3.0
Քաշաթաղ	141	94	4.7	3.1

Հարցված տնային տնտեսությունների 7.3 տոկոսը բաղկացած է 2 անդամից, 19.5 տոկոսը՝ 3 անդամից, 17.7 տոկոսը՝ 4 անդամից, 22.3 տոկոսը՝ 5 անդամից, 17.2 տոկոսը՝ 6 անդամից, 16 տոկոսը՝ 7 և ավելի անդամներից: Ինը և ավելի անդամ ունեյր 13 տնային տնտեսություն կամ հետազոտությանը մասնակցած ընտանիքների 3.3 տոկոսը:

Աղյուսակ 3.3.3. Հետազոտությունում ընդգրկված տնային տնտեսություններն ըստ անդամների թվաքանակի՝ շրջաններով

	Տնային տնտեսությունների թիվը	այդ թվում՝ ունեն							
		2 անդամ	3 անդամ	4 անդամ	5 անդամ	6 անդամ	7 անդամ	8 անդամ	9 և ավելի անդամ
Ընդամենը	395	29	77	70	88	68	32	18	13
ք. Ստեփանակերտ	157	13	47	23	33	19	13	6	3
Ասկերան	42	1	2	17	12	3	7	-	-
Հաղրուք	26	5	2	5	3	5	2	-	4
Մարտակերտ	57	3	4	8	14	14	4	9	1
Մարտունի	54	2	6	4	16	18	3	2	3
Շահումյան	9	4	3	-	1	1	-	-	-
Շուշի	20	1	3	9	1	2	2	1	1
Քաշաթաղ	30	-	10	4	8	6	1	-	1

%

	Տնային տնտեսությունների թիվը	այդ թվում՝ ունեն							
		2 անդամ	3 անդամ	4 անդամ	5 անդամ	6 անդամ	7 անդամ	8 անդամ	9 և ավելի անդամ
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
ք. Ստեփանակերտ	39.7	44.8	61.0	32.9	37.5	27.9	40.6	33.3	23.1
Ասկերան	10.6	3.5	2.6	24.3	13.6	4.4	21.9	-	-
Հաղրուք	6.6	17.2	2.6	7.1	3.4	7.4	6.3	-	30.7
Մարտակերտ	14.4	10.4	5.2	11.4	15.9	20.6	12.5	50.0	7.7
Մարտունի	13.7	6.9	7.8	5.7	18.2	26.5	9.4	11.1	23.1
Շահումյան	2.3	13.8	3.9	-	1.1	1.5	-	-	-
Շուշի	5.1	3.4	3.9	12.9	1.2	2.9	6.2	5.6	7.7
Քաշաթաղ	7.6	-	13.0	5.7	9.1	8.8	3.1	-	7.7

Ամուսնական գույգերի կառուցվածքում գերակշռում են 18-29 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները՝ կազմելով 71.8 տոկոս: Տղամարդկանց մեծամասնությունը (46.3 տոկոսը)

պատկանում է 25-29 տարեկան տարիքային խմբին, իսկ կանանց մեծամասնությունը(48.1տոկոսը)՝ 18-24 տարեկան տարիքային խմբին: 9.6 տոկոսը կազմել են 35տարեկան և բարձր տարիքի ներկայացուցիչները, այդ թվում տղամարդկանց կշիռը կազմել է 14.4 տոկոս, կանանցը՝ 4.8 տոկոս:

Աղյուսակ 3.3.4. Ամուսնական գույգերի սեռատարիքային բաշխվածությունը

մարդ


	Ընդամենը	18 – 24 տարեկան	25 – 29 տարեկան	30 – 34 տարեկան	35 – 39 տարեկան	40 տարեկան և բարձր տարիքի
Ընդամենը	790	246	321	147	51	25
Տղամարդիկ	395	56	183	99	36	21
Կանայք	395	190	138	48	15	4

%

	Ընդամենը	18 – 24 տարեկան	25 – 29 տարեկան	30 – 34 տարեկան	35 – 39 տարեկան	40 տարեկան և բարձր տարիքի
Ընդամենը	100.0	35.2	45.9	21.0	7.3	3.6
Տղամարդիկ	100.0	14.2	46.3	25.1	9.1	5.3
Կանայք	100.0	48.1	34.9	12.2	3.8	1.0


35տարեկանից բարձր տարիք ունեցողների 27.6-ական տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտ քաղաքին և Մարտակերտի շրջանին, և եթե Ստեփանակերտում այն կազմել է ամուսնացողների 6.7 տոկոսը, Մարտակերտի շրջանում՝ 18.4 տոկոսը:

Գծապատկեր 3.3.1. Ամուսնացածների տարիքային բաշխվածությունը ըստ սեռի, %



Հետազոտությանը մասնակցած ամուսնական գույգերի տարիքային խմբերի կառուցվածքում կանայք գերակշռում են միայն 18-24 տարեկան տարիքային խմբում՝ կազմելով 77.2 տոկոս, մնացած տարիքային խմբերում գերակշռում են տղամարդիկ: Տղամարդկանց տեսակարար կշիռը 35 տարեկան և բարձր տարիքի տարիքային խմբում կազմում է 75.0 տոկոս:

Գծապատկեր 3.3.2. Ամուսինների սեռատարիքային բաշխվածությունը, %



Ըստ շրջանների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր շրջաններում տղամարդկանց մեծամասնությունը պատկանում է 25-29տարեկան, իսկ կանանց մեծամասնությունը, բացի Մարտունու շրջանից, 18-24 տարեկան տարիքային խմբերին: Մարտունու շրջանում կանանց մեծամասնությունը՝ 46,3 տոկոսը, պատկանում է 25-29 տարեկան տարիքային խմբին: Մարտակերտի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում 35 տարեկան և բարձր տարիքի տղամարդկանց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 24.5 տոկոս, 20.0-ական տոկոս, իսկ կանանց տեսակարար կշիռները՝ 12.3 տոկոս, 5.0տոկոս և 3.3տոկոս: Շահումյանի շրջանում 35տարեկան և բարձր տարիքի ամուսնական զույգեր հետագոտությամբ չեն ընդգրկված:

Աղյուսակ 3.3.5. Ամուսնացածների սեռատարիքային բաշխվածությունը՝ շրջաններով

Շրջաններ		Ընդամենը	18 - 24	25 - 29	30 - 34	35 - 39	40
			տարեկան	տարեկան	տարեկան	տարեկան	տարեկան և բարձր տարիքի
ք. Ստեփանակերտ	տղամարդիկ	100.0	15.9	50.3	23.6	6.4	3.8
	կանայք	100.0	47.1	36.3	13.4	2.6	0.6
Ասկերան	տղամարդիկ	100.0	19.0	40.5	26.2	11.9	2.4
	կանայք	100.0	50.0	30.9	14.3	4.8	-
Հաղուոթ	տղամարդիկ	100.0	7.7	57.7	23.1	7.7	3.8
	կանայք	100.0	61.5	30.8	3.9	3.8	-
Մարտակերտ	տղամարդիկ	100.0	14.1	31.6	29.8	14.0	10.5
	կանայք	100.0	38.6	31.6	17.5	7.0	5.3
Մարտունի	տղամարդիկ	100.0	7.4	51.9	25.9	11.1	3.7
	կանայք	100.0	40.7	46.3	9.3	3.7	-
Շահումյան	տղամարդիկ	100.0	11.1	66.7	22.2	-	-
	կանայք	100.0	88.9	11.1	-	-	-
Շուշի	տղամարդիկ	100.0	10.0	40.0	30.0	15.0	5.0
	կանայք	100.0	45.0	35.0	15.0	5.0	-
Քաշաթաղ	տղամարդիկ	100.0	20.0	40.0	20.0	6.7	13.3
	կանայք	100.0	60.0	30.0	6.7	3.3	-
Ընդամենը	տղամարդիկ	100.0	14.2	46.3	25.1	9.1	5.3
	կանայք	100.0	48.1	34.9	12.2	3.8	1.0

Ամուսինների 34.7տոկոսի տարիքային տարբերությունը կազմում է 2-5 տարի, 25.8 տոկոսը ունեն 5 տարուց ավելի տարիքային տարբերություն, 27.3 տոկոսը՝ մինչև 2 տարվա տարիքային տարբերություն, իսկ 12.2 տոկոսը՝ նույն տարիքի են: Բոլոր շրջաններում էլ գերակշռում են ամուսինների միջև եղած 2-5 տարվա տարիքային տարբերությունները, բացի Ստեփանակերտից և


Շահումյանի շրջանից, որտեղ գերակշռել է համապատասխանաբար՝ մինչև 2 տարի և 5 տարուց ավելի տարիքային տարբերությունները:

Աղյուսակ 3.3.6. Ամուսինների տարիքային տարբերությունները

	Ընդամենը	Նույն տարիքի	Մինչև 2տարվա տարբերություն	2-5տարվա տարբերություն	5տարուց ավելի տարբերություն
Ընդամենը	100.0	12.2	27.3	34.7	25.8
ք. Ստեփանակերտ	100.0	13.4	35.0	32.5	19.1
Ասկերան	100.0	14.3	28.6	30.9	26.2
Հաղրուք	100.0	7.7	26.9	34.6	30.8
Մարտակերտ	100.0	19.3	17.6	33.3	29.8
Մարտունի	100.0	11.1	22.2	35.2	31.5
Շահումյան	100.0	0.0	22.2	33.3	44.5
Շուշի	100.0	5.0	20.0	50.0	25.0
Քաշաթաղ	100.0	3.3	20.0	43.4	33.3

Ամուսնացածներից 32.4 տոկոսը ծնվել է Ստեփանակերտում, 37.6 տոկոսը՝ գյուղական բնակավայրերում, 11.6 տոկոսը՝ այլ քաղաքային բնակավայրերում, 11.5 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությունում, 0.4 տոկոսը՝ Ռուսաստանի Գաղութային շրջանում, 6.5 տոկոսը՝ այլ երկրներում:

Գծապատկեր 3.3.3. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ ծննդավայրի, %



Շրջաններով վերլուծելով ամուսնացած տղամարդկանց և կանանց բաշխվածությունը ըստ ծննդավայրի նկատում ենք, որ Ստեփանակերտ քաղաքում հետագոտությունում ընդգրկված ամուսնացած տղամարդկանց 80.9 տոկոսի և կանանց 67.5 տոկոսի ծննդավայրն է հանդիսանում մայրաքաղաքը, 5.7 տոկոսը և 12.1 տոկոսը ծնվել են գյուղական բնակավայրերում, 3.2 տոկոսը և 5.7 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությունում, 8.9 տոկոսը և 8.3 տոկոսը՝ այլ երկրներում, 1.3 տոկոսը և 6.4 տոկոսը՝ այլ քաղաքային բնակավայրերում: Շուշիի շրջանում ամուսնացած տղամարդկանց 20.0 տոկոսը և կանանց 15.0 տոկոսը ծնվել են Ստեփանակերտում, 10-ական տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությունում, 35.0 տոկոսը և 25.0 տոկոսը՝ այլ երկրներում:


Աղյուսակ 3.3.7. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ ծննդավայրի՝ շրջաններով, մարդ տղամարդիկ

Շրջաններ	Ընդամենը	ք. Ստեփանակերտ	քաղաք ԼՂՀ-ում	գյուղ ԼՂՀ-ում	ՀՀ	ՌԳԴ	այլ երկիր
ք. Ստեփանակերտ	157	127	2	9	5	-	14
Ասկերան	42	2	7	28	1	1	3
Հաղրուք	26	-	4	20	2	-	-
Մարտակերտ	57	-	14	37	2	-	4
Մարտունի	54	-	12	38	2	-	2
Շահումյան	9	-	-	8	1	-	-
Շուշի	20	4	2	5	2	-	7
Քաշաթաղ	30	2	-	3	25	-	-
Ընդամենը	395	135	41	148	40	1	30

կանայք

Շրջաններ	Ընդամենը	ք. Ստեփանակերտ	քաղաք ԼՂՀ-ում	գյուղ ԼՂՀ-ում	ՀՀ	ՌԳ	այլ երկիր
ք. Ստեփանակերտ	157	106	10	19	9	-	13
Ասկերան	42	8	4	25	2	1	2
Հաղրուք	26	-	3	22	1	-	-
Մարտակերտ	57	3	14	36	4	-	-
Մարտունի	54	1	18	34	1	-	-
Շահումյան	9	-	-	3	5	1	-
Շուշի	20	3	2	8	2	-	5
Քաշաթաղ	30	-	-	2	27	-	1
Ընդամենը	395	121	51	149	51	2	21

Գծապատկեր 3.3.4. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ ծննդավայրի և սեռի՝ շրջաններով, % տղամարդիկ




Ամուսնացածների վերլուծությունը ըստ ծննդավայրի և սեռի ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ծնվածների կառուցվածքում գերակշռում են կանայք, իսկ Ստեփանակերտ քաղաքում և այլ երկրներում ծնվածների կառուցվածքում գերակշռում են տղամարդիկ:

Աղյուսակ 3.3.8. Ամուսինների սեռատարիքային բաշխվածությունը ըստ ծննդավայրի շրջաններով, %

		Ընդամենը	ք. Ստեփանակերտ	քաղաք ԼՂՀ-ում	գյուղ ԼՂՀ-ում	ՀՀ	ՌԳ	այլ երկիր
18 - 24 տարեկան	տղամարդիկ	100.0	33.9	19.7	25.0	10.7	1.8	8.9
	կանայք	100.0	30.5	13.2	36.8	16.3	-	3.2
25 - 29 տարեկան	տղամարդիկ	100.0	39.4	11.5	32.2	10.9	-	6.0
	կանայք	100.0	34.8	13.0	34.8	8.7	1.5	7.2
30 - 34 տարեկան	տղամարդիկ	100.0	33.3	6.1	46.5	5.0	-	9.1
	կանայք	100.0	20.8	14.6	43.8	10.4	-	10.4
35 - 39 տարեկան	տղամարդիկ	100.0	16.7	5.5	50.0	16.7	-	11.1
	կանայք	100.0	20.0	6.7	53.3	20.0	-	-
40 տարեկան և բարձր տարիքի	տղամարդիկ	100.0	23.8	4.7	52.4	14.3	-	4.8
	կանայք	100.0	50.0	-	50.0	-	-	-
Ընդամենը	տղամարդիկ	100.0	34.2	10.4	37.5	10.1	0.2	7.6
	կանայք	100.0	30.7	12.9	37.7	12.9	0.5	5.3


Քծապատկեր 3.3.5. Ամուսինների բաշխվածությունը ըստ ծննդավայրի և սեռի, %



18-24 տարեկան և 25-29 տարեկան տարիքային խմբերի կառուցվածքում ամուսնացած տղամարդկանց գերակշիռ մասը ծնվել է Ստեփանակերտ քաղաքում: 25-29 տարեկան տարիքային խմբում Ստեփանակերտում և գյուղական վայրերում ծնված կանայք ունեն նույն կշիռը: Մնացած բոլոր տարիքային խմբերում և տղամարդկանց, և կանանց մեծամասնությունը ծնվել են գյուղական վայրերում:


18-24 տարեկան տարիքային խմբի կառուցվածքում ամուսնացած տղամարդկանց 10.7տոկոսը ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, 1.8 տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնությունում, 8.9 տոկոսը՝ այլ երկրներում: 35-39 տարեկան տարիքային խմբում Հայաստանի Հանրապետությունում են ծնվել տղամարդկանց 16.7տոկոսը և կանանց 20.0տոկոսը, իսկ տղամարդկանց 11.1տոկոսը ծնվել է այլ երկրներում:

Քծապատկեր 3.3.6. Ամուսնացածների սեռատարիքային բաշխվածությունը ըստ ծննդավայրի, %
Տղամարդիկ Կանայք




3.4 Կրթություն: Հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերի բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի հետևյալն է. 40տոկոսն ուներ բարձրագույն կրթություն, 12.4տոկոսը՝ միջին մասնագիտական, 39.7տոկոսը՝ միջնակարգ(լրիվ) ընդհանուր, 2.3տոկոսը՝ հիմնական ընդհանուր կրթություն: Հետբուհական կրթություն ուներ ամուսնացածների 0.4 տոկոսը:

Քծապատկեր 3.4.1. Ամուսնացածների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի, %



Հետազոտության պահին հարցված տղամարդկանց 33.9 տոկոսը և կանանց 46.1 տոկոսը ուներ բարձրագույն կրթություն, տղամարդկանց 3.8 տոկոսը և կանանց 5.1 տոկոսը ուներ թերի բարձրագույն կրթություն, միջին մասնագիտական կրթություն ուներ հարցված տղամարդկանց 11.4 տոկոսը և կանանց 13.4 տոկոսը: Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ուներ տղամարդկանց 45.1 տոկոսը և կանանց 34.4 տոկոսը: Հետբուհական կրթություն ուներ տղամարդկանց 0.2 տոկոսը և կանանց 0.5 տոկոսը:

Պատկեր 3.4.2. Ամուսնացածների սեռային բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի, %




Ամուսնացածների կրթական մակարդակի վերլուծությունը շրջաններով ցույց է տալիս, որ Ստեփանակերտում և Շուշիում հետազոտությանը մասնակցածների կառուցվածքում գերակշռում են բարձրագույն կրթություն ունեցողները: Մնացած շրջաններում գերակշռում են միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն ունեցողները: Հաղորդում բարձրագույն և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն ունեցողները ունեն նույն տեսակարար կշիռը: Հետբուհական կրթություն ունեն միայն Ստեփանակերտ քաղաքում հարցվածները:

Աղյուսակ 3.4.1. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի՝ շրջաններով, %

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղորթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Հետբուհական	100.0	100.0	-	-	-	-	-	-	-
Բարձրագույն	100.0	50.3	8.9	7.0	10.1	10.7	2.2	5.4	5.4
Բարձրագույն թերի	100.0	40.0	5.7	14.3	14.3	8.6	-	-	17.1
Միջին մասնագիտական	100.0	40.8	16.3	3.1	8.2	10.2	1.0	12.2	8.2
Միջին մասնագիտական թերի	100.0	66.7	-	-	16.7	-	-	16.6	-
Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր	100.0	26.4	11.8	7.0	20.7	19.1	3.2	2.6	9.2
Հիմնական ընդհանուր	100.0	61.1	5.6	-	16.6	5.6	-	11.1	-
Ընդամենը	100.0	39.7	10.6	6.6	14.4	13.7	2.3	5.1	7.6

Ամուսնական զույգերի կրթական մակարդակի ըստ տարածքային բաշխվածության դիտարկումը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթություն ունեն հարցվածների 28.1-50.6տոկոսը, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 20-57 տոկոսը:

Քճապատկեր 3.4.3. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի՝ շրջաններով





Ըստ սեռի ամուսնացածների կրթական մակարդակի վերլուծությունը շրջաններով ցույց է տալիս, որ բացի Շուշիի շրջանից, բոլոր շրջաններում բարձրագույն կրթությամբ կանայք գերազանցում են բարձրագույն կրթությամբ տղամարդկանց, իսկ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթությամբ տղամարդիկ գերազանցում են կանանց:

Քճապատկեր 3.4.4. Ամուսնացածների բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի և սեռի՝ շրջաններով, %


Տղամարդիկ

Կանայք



Երկուստեք բարձրագույն կրթություն ունեն ամուսնական զույգերից 120-ը կամ 30.4 տոկոսը, ամուսիններից բարձրագույն կրթություն ունեն միայն կանայք 84դեպքում, ինչը կազմել է հարցված ամուսնական զույգերի 21.3տոկոսը, ամուսիններից բարձրագույն կրթություն ունեն միայն տղամարդիկ 30 դեպքում, ինչը կազմել է հարցված ամուսնական զույգերի 7.6տոկոսը:

Քճապատկեր 3.4.5. Ամուսնական զույգերի կառուցվածքը ըստ ամուսինների կրթական մակարդակի, %



Հետազոտության պահին ուսանում են 9 մարդ կամ հետազոտությանը մասնակցած ամուսինների 1.1 տոկոսը, որից 8-ը կամ 88.9 տոկոսը կանայք են: Ուսանողներից 44.4 տոկոսը հանդիսանում են Ստեփանակերտում ամուսնացած կանայք, 11.1-ական տոկոսը Մարտունու շրջանում ամուսնացած կանայք և տղամարդիկ:

Աղյուսակ 3.4.2. Ամուսինների բաշխվածությունը ըստ մասնագիտության և սեռի

մարդ

	Ընդամենը	այդ թվում	
		տղամարդ	կին
Բնական և ինժեներական գիտությունների բնագավառի մասնագետներ	20	12	8
Կենսաբանական, գյուղատնտեսական գիտությունների և առողջապահության մասնագետներ	21	10	11
Կրթության ոլորտի մասնագետներ	90	23	67
Բարձր որակավորման այլ մասնագետներ	102	49	53
Ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառի միջին որակավորման մասնագետներ	120	56	64
Ֆինանսատնտեսական բնագավառի, վարչական և սոցիալական գործունեության միջին անձնակազմ	33	21	12
Բնական գիտությունների, առողջապահության միջին որակավորման մասնագետներ և օժանդակ անձնակազմ	35	7	28
Սպասարկման ոլորտի աշխատողներ	15	2	13
Մետաղամշակման և մեքենաշինության բանվորներ	1	1	-
Ստացիոնար սարքավորումների օպերատորներ, սպարատավարներ, մեքենավարներ և փականագործ հավաքողներ	2	2	-
Շարժական սարքավորումների վարորդներ և մեքենավարներ	15	15	-
Զինվորական-սպայական անձնակազմ	2	2	-
Զույգ մասնագիտություն	334	195	139
Ընդամենը	790	395	395

Հետազոտության արդյունքներով ամուսնացածների 29.5 տոկոսը հանդիսանում են բարձր որակավորման մասնագետներ, այդ թվում՝ տղամարդիկ կազմում են 23.8 տոկոսը, կանայք՝ 35.2 տոկոսը: Բարձր որակավորման մասնագետների կառուցվածքում կրթության ոլորտի մասնագետները կազմում են 38.6 տոկոսը, այդ թվում տղամարդկանց համար՝ 24.5 տոկոս, կանանց համար՝ 48.2 տոկոս:

Աղյուսակ 3.4.3. Ամուսինների բաշխվածությունը ըստ մասնագիտության և սեռի, %

	Ընդամենը	այդ թվում	
		տղամարդ	կին
Բնական և ինժեներական գիտությունների բնագավառի մասնագետներ	2.5	3.0	2.0
Կենսաբանական, գյուղատնտեսական գիտությունների և առողջապահության մասնագետներ	2.7	2.5	2.8
Կրթության ոլորտի մասնագետներ	11.4	5.8	17.0
Բարձր որակավորման այլ մասնագետներ	12.9	12.4	13.4
Ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառի միջին որակավորման մասնագետներ	15.2	14.2	16.2
Ֆինանսատնտեսական բնագավառի, վարչական և սոցիալական գործունեության միջին անձնակազմ	4.2	5.3	3.0
Բնական գիտությունների, առողջապահության միջին որակավորման մասնագետներ և օժանդակ անձնակազմ	4.4	1.8	7.1
Սպասարկման ոլորտի աշխատողներ	1.9	0.5	3.3
Մետաղամշակման և մեքենաշինության բանվորներ	0.1	0.3	-
Ստացիոնար սարքավորումների օպերատորներ, սպարատավարներ, մեքենավարներ և փականագործ հավաքողներ	0.2	0.5	-
Շարժական սարքավորումների վարորդներ և մեքենավարներ	1.9	3.8	-
Զինվորական-սպայական անձնակազմ	0.3	0.5	-
Զույգ մասնագիտություն	42.3	49.4	35.2
Ընդամենը	100.0	100.0	100.0

Միջին որակավորման մասնագետները կազմում են հարցվածների 23.8 տոկոսը, որից տղամարդիկ կազմում են 44.7 տոկոսը, կանայք՝ 55.3 տոկոսը: Հարցվածների 42.3 տոկոսը չունեն մասնագիտություն, ըստ որում՝ տղամարդկանց 49.4 տոկոսը և կանանց՝ 35.2 տոկոսը:

Սպասարկման ոլորտում բարձր է կանանց ընդգրկվածությունը՝ ընդհանուրի 86.7տոկոսը:

Նույն մասնագիտությունը ունեն 19 ամուսնական զույգ կամ ամուսնական զույգերի 4.8 տոկոսը, այդ թվում՝ 5-ական ամուսնական զույգեր կամ նույն մասնագիտությունը ունեցող ամուսնական զույգերի 26.3-ական տոկոսը տնտեսագետներ և մանկավարժներ են:


3.5. Երեխաների առկայություն: Հետազոտությանը մասնակցած 301ընտանիքներում կամ հետազոտությանը ընդգրկված ընտանիքների 76.2 տոկոսում առկա էր 426 երեխա կամ մեկ ընտանիքում միջին հաշվով կա 1.4 երեխա: Երեխաների 88 տոկոսը ծնվել է բնական ճանապարհով, 12 տոկոսը՝ վիրահատական միջամտությամբ:

Աղյուսակ 3.5.1. Երեխաների առկայությունը ընտանիքներում, ընտանիքներում ծնված երեխաները ըստ ծննդաբերության տեսակի՝ շրջաններով

Շրջաններ	Երեխա ունեցող ընտանիքների թիվը	Երեխաների թիվը ընտանիքներում, մարդ	այդ թվում՝ ծնվել են,%		Երեխա չունեցող ընտանիքների թիվը	այդ թվում՝ ամուսնացած են 9 ամսից ավելի
			բնական ճանապարհով	կեսարյան հատմամբ		
քՍտեփանակերտ	109	130	84.4	15.6	48	29
Ասկերան	30	40	93.3	6.7	12	7
Հաղրուք	19	27	89.5	10.5	7	6
Մարտակերտ	51	96	94.1	5.9	6	5
Մարտունի	40	49	85.0	15.0	14	9
Շահումյան	7	11	85.7	14.3	2	1
Շուշի	17	27	94.1	5.9	3	2
Քաշաթաղ	28	46	85.7	14.3	2	1
Ընդամենը	301	426	88.0	12.0	94	60

Հարցված ամուսնական զույգերից 15.2տոկոսը, չնայած ամուսնության ժամկետներին, երեխա չունի:

Պատկեր 3.5.1. Ամուսնական զույգերի կառուցվածքը ըստ երեխա ունենալու հանգամանքի, շրջաններով, %



Հետազոտությանը ընդգրկված արցախյան մեծ հարսանիքին ամուսնացած զույգերի 75.8տոկոսը ուներ երեխա, ևս 12-ը կամ 13.2 տոկոսը սպասում է առաջին երեխային:

Աղյուսակ 3.5.2. Արցախյան մեծ հարսանիքին ամուսնացած զույգերը ըստ երեխա ունենալու հանգամանքի

Շրջաններ	Ընտանիքների թիվը	այդ թվում՝ ունեն		
		1 երեխա	2 երեխա	3 և ավելի երեխա
Ընդամենը	91	66	1	2
ք. Ստեփանակերտ	50	39	-	-
Ասկերան	2	2	-	-
Հաղրուք	9	6	-	-
Մարտակերտ	10	6	1	1
Մարտունի	11	7	-	1
Շահումյան	1	-	-	-
Շուշի	4	2	-	-
Քաշաթաղ	4	4	-	-


Մեկ երեխա ուներ երեխա ունեցող ընտանիքների 72.4տոկոսը, երկու երեխա՝ 18.9 տոկոսը, 3 և ավելի երեխա՝ 8.7տոկոսը: Ըստ շրջանների 3 և ավելի երեխա ուներ Մարտակերտի շրջանում երեխա ունեցող հարցված ընտանիքների 23.5 տոկոսը, Քաշաթաղի շրջանում՝ 17.8 տոկոսը, Շահումյանի շրջանում՝ 14.3 տոկոսը, Շուշիի շրջանում՝ 11.8 տոկոսը:

Աղյուսակ 3.5.3. Երեխա ունեցող ընտանիքները ըստ երեխաների թվաքանակի՝ շրջաններով, %

Շրջաններ	Երեխա ունեցող ընտանիքների թիվը	այդ թվում՝ ունեն		
		1 երեխա	2 երեխա	3 և ավելի երեխա
ք. Ստեփանակերտ	100.0	83.5	13.8	2.7
Ասկերան	100.0	70.0	26.7	3.3
Հաղրուք	100.0	68.4	26.3	5.3
Մարտակերտ	100.0	51.0	25.5	23.5
Մարտունի	100.0	82.5	15.0	2.5
Շահումյան	100.0	71.4	14.3	14.3
Շուշի	100.0	58.8	29.4	11.8
Քաշաթաղ	100.0	67.9	14.3	17.8
Ընդամենը	100.0	72.4	18.9	8.7


1 երեխա ունեցող ընտանիքների կշիռը բարձր է հատկապես Ստեփանակերտում՝ 83.5տոկոս, ինչը կազմել է տվյալ խմբի ընտանիքների 41.7տոկոսը:

Գծապատկեր 3.5.2. Երեխա ունեցող ընտանիքները ըստ երեխաների թվաքանակի, %



Հետազոտության պահին 94 ամուսնական զույգ կամ հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերի 23.8տոկոսը երեխա չունեն: Ընդ որում, երեխա չունեցողների 63.8տոկոսի ամուսնության տևողությունը կազմում է ինը ամսից ավելի: Ըստ շրջանների այդ ցուցանիշը Հաղրուքի շրջանում կազմում է 23.1տոկոս, Ստեփանակերտում՝ 18.5տոկոս, Ասկերանի և Մարտունու շրջաններում՝ 16.7-ական տոկոս, Շահումյանի շրջանում՝ 11.1 տոկոս, Շուշիի շրջանում՝ 10.0 տոկոս:

Պատկեր 3.5.3. Գամսից ավելի ամուսնացած երեխա չունեցող ընտանիքների կառուցվածքը (շրջանի ընդամենի նկատմամբ, %)



Ըստ ամուսնության ժամկետի երեխա չունեցող ամուսնական զույգերի կառուցվածքում 42.6 տոկոսի ամուսնության ժամկետը կազմում է 12-ից 24 ամիս, 25.5 տոկոսինը՝ 9-ից 12 ամիս, 21.3 տոկոսինը՝ 24 ամսից ավելի, 10.6 տոկոսինը՝ մինչև 9 ամիս:


Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում երեխա չունեցողների կառուցվածքում 50-ական տոկոսը կազմում են 9-ից 12 ամիս և 12-ից 24 ամիս, Շուշիի, Մարտակերտի շրջաններում, Ստեփանակերտում և Ասկերանի շրջանում համապատասխանաբար՝ 66.7 տոկոսը, 50.0 տոկոսը, 43.7 տոկոսը և 33.3 տոկոսը կազմում են 12-ից 24 ամիս, Հաղբուքի շրջանում 42.9 ական տոկոսը՝ 12-ից 24 ամիս և 24 ամսից ավելի ամուսնացածները:

Աղյուսակ 3.5.4. Երեխա չունեցող ամուսնական զույգերի բաշխվածությունը ըստ շրջանների, %

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղբուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
մինչև 9 ամիս	10.6	10.4	16.7	14.2	-	14.3	-	-	-
9-12 ամիս	25.5	29.2	25.0	-	16.7	21.4	50.0	33.3	50.0
12-24 ամիս	42.6	43.7	33.3	42.9	50.0	35.7	50.0	66.7	50.0
24 ամսից ավելի	21.3	16.7	25.0	42.9	33.3	28.6	-	-	-

Հարցված ընտանիքներում 24.8տոկոսը սպասում է երեխայի ծննդի: Երեխայի սպասող ընտանիքների կառուցվածքում առաջին երեխային են սպասում 57.1տոկոսը, երկրորդ երեխային՝ 36.8 տոկոսը, երրորդ երեխային՝ 6.1տոկոսը: Առաջին երեխային են սպասում ինը ամսից ավելի ամուսնացած երեխա չունեցող ամուսնական զույգերի 93.3 տոկոսը:

Գծապատկեր 3.5.4. Երեխայի սպասող ընտանիքների կառուցվածքը, %




Երեխայի սպասող ընտանիքների վերլուծությունը ըստ շրջանների ցույց է տալիս, որ Մարտակերտի շրջանում երրորդ երեխային են սպասում երեխայի սպասող ընտանիքների 30 տոկոսը, Հաղրուփի շրջանում՝ 16.7 տոկոսը, Ասկերանի շրջանում՝ 7.7 տոկոսը, Ստեփանակերտում՝ 2.3 տոկոսը: Մնացած շրջաններում հետազոտությանը մասնակցած ընտանիքներում երրորդ երեխային սպասող ամուսնական զույգեր չեն արձանագրվել:

Աղյուսակ 3.5.5. Երեխայի սպասող ընտանիքները՝ շրջաններով

Շրջաններ	Երեխայի սպասող ընտանիքների թիվը	այդ թվում՝ սպասում են		
		առաջին երեխային	երկրորդ երեխային	երրորդ երեխային
ք. Ստեփանակերտ	43	29	13	1
Ասկերան	13	7	5	1
Հաղրուփ	6	2	3	1
Մարտակերտ	10	3	4	3
Մարտունի	13	9	4	-
Շահումյան	4	2	2	-
Շուշի	4	2	2	-
Քաշաթաղ	5	2	3	-
Ընդամենը	98	56	36	6

Գծապատկեր 3.5.4. Երեխայի սպասող ընտանիքների կառուցվածքը ըստ երեխաների թվի՝ շրջաններով, %




Երեխա չունեցող ամուսնական զույգերից 63,8տոկոսը չի պատասխանել երեխա չունենալու պատճառի մասին հարցին, 27.7տոկոսը որպես պատճառ նշել է առողջական խնդիրները, 4.2տոկոսը դեռ չի պլանավորել երեխա ունենալ:

Աղյուսակ 3.5.6. Ընտանիքների բաշխվածությունը ըստ երեխա չունենալու պատճառների շրջաններով, %

Շրջաններ	դեռ չեն պլանավորել	առողջական	այլ	չեն պատասխանել
Ընդամենը	4.2	27.7	4.3	63.8
ք. Ստեփանակերտ	4.2	22.9	6.2	66.7
Ասկերան	0.0	41.7	0.0	58.3
Հաղրուք	0.0	57.1	0.0	42.9
Մարտակերտ	16.7	0.0	0.0	83.3
Մարտունի	7.2	35.7	0.0	57.1
Շահումյան	0.0	0.0	0.0	100.0
Շուշի	0.0	0.0	33.3	66.7
Քաշաբաղ	0.0	50.0	0.0	50.0

Երեխա չունեցող ամուսնական զույգերից 24.5տոկոսը դիմել է բժշկի, 4.2 որևէ քայլ դեռ չի ձեռնարկել, իսկ 71.3տոկոսը հարցին որևէ պատասխան չի տվել:

Գծապատկեր 3.5.5. Ամուսնական զույգերի ձեռնարկումները երեխաներ ունենալու կապակցությամբ, %



Երեխա չունեցող ամուսնական զույգերից 67.0տոկոսը իր կենսամակարդակը գնահատել է միջին, 24.5տոկոսը՝ ցածր, 5.3տոկոսը՝ շատ ցածր:


Աղյուսակ 3.5.7. Երեխաներ չունեցող զույգերի միջին ամսական եկամուտը

Միջին ամսական եկամտի չափը	Զույգերի թիվը	Տոկոսով ընդամենի նկատմամբ
մինչև 30000 դրամ	1	1.1
30001 - 50000 դրամ	1	1.1
50001 - 70000 դրամ	3	3.2
70001 - 90000 դրամ	10	10.6
90001-130000 դրամ	15	15.9
130001-170000 դրամ	15	15.9
170001-190000 դրամ	6	6.4
ավելի քան 190000 դրամ	40	42.6
Դժվարացել են գնահատել	3	3.2
Ընդամենը	94	100.0

Ինչպես ակնհայտ է աղյուսակում բերված տվյալներից երեխա չունենալու պատճառ չի կարող լինել միջին ամսական եկամուտների ցածր մակարդակը, հավելենք նաև, որ այս զույգերի 80.9տոկոսը ունի սեփական բնակարան կամ առանձնատուն:


Երեխա ունեցող ընտանիքներում ծնողների գնահատմամբ երեխաների 79.7տոկոսի առողջական վիճակը լավ է, 19.0 տոկոսինը՝ բավարար, իսկ 1.3 տոկոսինը՝ վատ:

Գծապատկեր 3.5.6. Երեխաների առողջական վիճակը ծնողների գնահատմամբ, %




Շահումյանի շրջանում իրենց երեխայի առողջական վիճակը լավ են գնահատել հարցմանը մասնակցած երեխա ունեցող բոլոր ընտանիքներում: Մարտունու շրջանում երեխա ունեցող ընտանիքների կառուցվածքում 50.0-ական տոկոսը իրենց երեխայի առողջական վիճակը գնահատել են լավ և բավարար: Շուշիի շրջանում իրենց երեխայի առողջական վիճակը վատ են գնահատել երեխա ունեցող ընտանիքների 5.9 տոկոսը, Ստեփանակերտում՝ 2.7 տոկոսը: Մնացած շրջաններում իրենց երեխայի առողջական վիճակը վատ գնահատող ընտանիքներ չեն արձանագրվել:

Գծապատկեր 3.5.7 Երեխաների առողջական վիճակը ծնողների գնահատմամբ՝ շրջաններով, %



Հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերի 58.0տոկոսը պլանավորել է ունենալ 3 երեխա, 23.0տոկոսը՝ 2 երեխա, 11.1 տոկոսը՝ 4 երեխա, 4.6 տոկոսը՝ 5 և ավելի երեխա, 3.3 տոկոսը՝ 1 երեխա:


Գծապատկեր 3.5.8 Ընտանիքների կառուցվածքը ըստ պլանավորած երեխաների թվի, %



Ըստ շրջանների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր շրջաններում, բացի Շահումյանի շրջանից, մեծամասնություն են կազմում 3երեխա պլանավորած ընտանիքները: Իսկ Շահումյանի շրջանում մեծ կշիռ ունեն 4երեխա պլանավորած ընտանիքները: 5 և ավելի երեխա են պլանավորել ունենալ Շահումյանի շրջանում հարցված ամուսնական զույգերի 22.2տոկոսը, Բաշաբաղի շրջանում՝ 20.0 տոկոսը, Մարտակերտի շրջանում՝ 10.5տոկոսը: 4 և ավելի երեխա չեն պլանավորել ունենալ Ասկերանի շրջանում, իսկ 5 և ավելի երեխա՝ Շուշիի շրջանում հարցված ամուսնական զույգերը:


Գծապատկեր 3.5.9 Ընտանիքների կառուցվածքը ըստ պլանավորած երեխաների թվի՝

շրջաններով, %



Քաղաքային և գյուղական բնակավայրերով վերլուծությունը ցույց է տալիս, որ պլանավորած երեխաների թվաքանակի կառուցվածքում քաղաքաբնակ ընտանիքներում երեխաների թվաքանակի աճին զուգընթաց նվազում է դրա տեսակարար կշիռը, իսկ գյուղական վայրերում, ընդհակառակը, կշիռը ավելանում է պլանավորած երեխաների աճին զուգընթաց:

Գծապատկեր 3.5.10 Ընտանիքների բաշխվածությունը ըստ պլանավորած երեխաների թվի քաղաքային և գյուղական բնակավայրերով, %



Չնայած այն հանգամանքին, որ քաղաքաբնակ ամուսնական զույգերը կազմել են ընդհանուրի 57.5տոկոսը, 5 և ավելի երեխաներ ունենալու մտադրություն ունեցողների մեջ դրանց կշիռը կազմել է 27.8տոկոս, իսկ 1երեխա ունենալու մտադրություն ունեցողների մեջ՝ 69.2տոկոս:

Ամուսնական զույգերի մեծամասնության՝ 52.5 տոկոսի համար քիչ երեխաներ պլանավորելու պատճառ է հանդիսանում առողջական վիճակը, ընդ որում քաղաքաբնակների կառուցվածքում այն կազմել է 47.7տոկոս, իսկ գյուղաբնակներինը՝ 60.8տոկոս: 20.6 տոկոսի համար պատճառ են հանդիսանում ֆինանսական, բնակարանային խնդիրները և աշխատանքի բացակայությունը:

Աղյուսակ 3.5.8. Ընտանիքների բաշխվածությունը ըստ քիչ երեխաներ պլանավորելու պատճառների քաղաքային և գյուղական բնակավայրերով, %

	Ընդամենը	քաղաքաբնակ	գյուղաբնակ
Առողջական	100.0	57.9	42.1
Բնակարանային խնդիր	100.0	75.0	25.0
Ֆինանսական	100.0	75.0	25.0
Աշխատանք չունեն	100.0	50.0	50.0
Բավարարված են	100.0	70.9	29.1


Հատկանշական է, որ 1-2երեխա ունենալու մտադրությամբ զույգերի կանանց 45.2 տոկոսը ուներ բարձրագույն կրթություն, տղամարդկանց՝ 34.6տոկոսը, այն դեպքում, երբ 4 և ավելի երեխա

ունենալու մտադրությամբ գույգերի կանանց 35.5տոկոսը ուներ բարձրագույն կրթություն, տղամարդկանց՝ 27.4տոկոսը:

Գծապատկեր 3.5.11 1-2 ու 4 և ավելի երեխաներ ունենալու մտադրությամբ ամուսնական գույգերը ըստ միջին ամսական եկամտի, %


1-2 ավելի երեխաներ ունենալու մտադրությամբ ամուսնական գույգերը

4 և ավելի երեխաներ ունենալու մտադրությամբ ամուսնական գույգերը



Հարցմանը մասնակցած երեխա ունեցող ընտանիքների 16.3տոկոսը երեխայի ծննդաբերության հետ կապված ծախսել է 100.0հազ. դրամից ավելի, 15.9 տոկոսը ծախսել է 40.0-50.0հազ. դրամ, 11.3 տոկոսը՝ 90.0-100.0հազ. դրամ, 11.0տոկոսը՝ մինչև 20.0հազ. դրամ, 10.0տոկոսը՝ 20.0-30.0հազ. դրամ:

Գծապատկեր 3.5.12 Ընտանիքների բաշխվածությունը ըստ ծննդաբերության հետ կապված ծախսերի, %



Ըստ շրջանների վերլուծությունը ցույց է տալիս, որ Քաշաթաղի շրջանում երեխա ունեցող ընտանիքների կառուցվածքում 42.9տոկոսը, Հաղորթի շրջանում՝ 36.8տոկոսը և Շահումյանի շրջանում՝ 28.5տոկոսը երեխայի ծննդաբերության հետ կապված ծախսել է ավելի քան 100.0հազ. դրամ: Շուշիի շրջանում 41.2տոկոսը և Ստեփանակերտում 21.1տոկոսը ծախսել են 40.0-ից 50.0հազ. դրամ:


Աղյուսակ 3.5.9. Ընտանիքների բաշխվածությունը ըստ ծննդաբերության հետ կապված ծախսերի՝ շրջաններով, %

	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղորթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	Ընդամենը
մինչև 20000 դրամ	5.5	20.0	5.2	25.5	10.0	-	11.7	3.6	11.0
20001 - 30000 դրամ	9.2	10.0	15.8	11.8	15.0	-	5.9	3.6	10.0
30001 - 40000 դրամ	14.7	3.4	10.5	11.8	7.5	-	-	-	9.3
40001 - 50000 դրամ	21.1	6.7	-	17.6	10.0	14.3	41.2	7.1	15.9
50001 - 60000 դրամ	8.2	13.3	5.3	3.9	10.0	-	5.9	14.3	8.3
60001 - 70000 դրամ	9.2	6.7	5.3	11.8	12.5	14.3	5.9	-	8.6
70001 - 80000 դրամ	5.5	13.3	5.3	9.8	5.0	14.3	5.9	7.1	7.3

	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրոթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	Ընդամենը
80001 - 90000 դրամ	2.8	-	-	-	2.5	14.3	5.9	-	2.0
90001 - 100000 դրամ	12.8	13.3	15.8	-	10.0	14.3	11.7	21.4	11.3
Ավելի քան 100000 դրամ	11.0	13.3	36.8	7.8	17.5	28.5	5.9	42.9	16.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ծննդաբերության հետ կապված ծախսերի վերաբերյալ հարցին պատասխանել են բոլոր երեխա ունեցող անուսական զույգերը, որոնցից քաղաքաբնակ է 54.5տոկոսը, գյուղաբնակ՝ 45.5տոկոսը:

Գծապատկեր 3.5.13. Ընտանիքների բաշխվածությունը ըստ ծննդաբերության հետ կապված ծախսերի՝ բնակավայրերով, %




Ծննդաբերության հետ կապված ծախսերը գրեթե կրկնակի աճում են կեսարյան հատման միջոցով ծնված երեխաների դեպքում:

Աղյուսակ 3.5.10. Մեկ երեխայի ծննդաբերության համար ծախսված գումարը, հազ. դրամ

Շրջանները	Ծախսերը 1 երեխայի հաշվով	որից՝ ծնված	
		բնական ճանապարհով	կեսարյան հատմամբ
Ընդամենը	76.0	68.0	135.4
ք. Ստեփանակերտ	74.6	66.9	116.1
Ասկերան	65.3	60.4	135.0
Հաղրոթ	115.8	108.8	175.0
Մարտակերտ	45.4	42.9	86.7
Մարտունի	73.5	60.0	150.0
Շահումյան	117.1	90.0	280.0
Շուշի	60.6	60.0	70.0
Քաշաթաղ	124.3	112.9	192.5


Երեխա ունեցող ընտանիքների կառուցվածքում 31.9տոկոսը երեխայի խնամքի համար միջին հաշվով ծախսում է 20.0-30.0հազ. դրամ, 21.3տոկոսը ծախսում է 30.0-40.0հազ. դրամ, 16.9տոկոսը՝ 40.0- 50.0 հազ. դրամ, 14.3տոկոսը՝ մինչև 20.0 հազ. դրամ:

Գծապատկեր 3.5.14. Ընտանիքների բաշխվածությունը ըստ երեխայի խնամքի համար պահանջվող միջին ամսական ծախսերի, %




Ըստ շրջանների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր շրջաններում, բացի Շուշի շրջանից, երեխայի համար պահանջվող միջին ամսական ծախսերը մեծամասնության՝ 27.5-57.1տոկոսի համար կազմում են 20.0-30.0հազ. դրամ, իսկ Շուշիի շրջանում՝ 47.0տոկոսի համար՝ 40.0- 50.0հազ. դրամ:

Գծապատկեր 3.5.15. Ընտանիքների բաշխվածությունը ըստ երեխայի խնամքի համար պահանջվող միջին ամսական ծախսերի՝ շրջաններով, %




Ըստ բնակավայրերի վերլուծելով երեխայի խնամքի համար պահանջվող միջին ամսական ծախսերը նկատում ենք, որ քաղաքաբնակների 26.8տոկոսը և 25.6տոկոսը երեխայի խնամքի համար միջին հաշվով ծախսում է համապատասխանաբար՝ 30.0-40.0հազ. դրամ և 20.0-30.0 հազ. դրամ, իսկ գյուղաբնակների 39.4տոկոսը և 21.2տոկոսը՝ 20.0-30.0 հազ. դրամ և մինչև 20.0հազ. դրամ:

Գծապատկեր 3.5.15. Ընտանիքների բաշխվածությունը ըստ երեխայի խնամքի համար պահանջվող միջին ամսական ծախսերի՝ բնակավայրերով, %




3.6.Բնակարանային և բնակության պայմաններ: Հետազոտությանը մասնակցած ամուսնական զույգերի 60.3 տոկոսը բնակվում են առանձնատներում, 23.5 տոկոսը՝ բազմաբնակարան շենքի բնակարաններում, 7,3 տոկոսը՝ ժամանակավոր կացարաններում, 8,9 տոկոսը՝ այլ կացարաններում:

Գծապատկեր 3.6.1. Ընտանիքների բաշխվածությունն ըստ կացարանի տեսակի, %



Ստեփանակերտում և Շուշիում ամուսնական զույգերի մեծ մասը՝ համապատասխանաբար 44.6տոկոսը և 65.0տոկոսը, բնակվում է բազմաբնակարան շենքի բնակարաններում, իսկ մնացած շրջաններում, բացի Շահումյանի շրջանից, առանձնատներում բնակվում են՝ 33.3 տոկոսից(Շահումյանի շրջան)-90.5տոկոսը(Ասկերանի շրջան): Շահումյանի շրջանում ամուսնական զույգերի գերակշիռ մասը բնակվում է ժամանակավոր կացարանում: Ժամանակավոր կացարանում են բնակվում ամուսնական զույգերի 1.9 տոկոսից (Մարտունու շրջան) 44.5տոկոսը (Շահումյանի շրջան): Ստեփանակերտ քաղաքում ամուսնական զույգերի 35.0տոկոսը բնակվում է առանձնատներում, 7.7տոկոսը՝ ժամանակավոր կացարանում, իսկ 12.7 տոկոսը՝ այլ կացարանում:

Գծապատկեր 3.6.2. Ամուսնական զույգերի կառուցվածքը ըստ կացարանի տեսակի՝ շրջաններով, %



Հետազոտությանը մասնակցած ամուսնական զույգերի 31.9տոկոսը վարում են ինքնուրույն տնտեսություն: Ըստ շրջանների Շահումյանի շրջանում ինքնուրույն տնտեսություն են վարում ամուսնական զույգերի 66.7 տոկոսը, Քաշաթաղի շրջանում՝ 50.0 տոկոսը, Շուշիի շրջանում՝ 40.0 տոկոսը, Հաղրոփի շրջանում՝ 38.5 տոկոսը:


Աղյուսակ 3.6.1. Ինքնուրույն տնտեսություն վարող ամուսնական զույգերի բաշխվածությունը ըստ բնակավայրերի

	Ընդամենը զույգեր	այդ թվում՝ վարում են առանձին տնտեսություն որից՝ ըստ բնակավայրերի, %		
		ընդամենը	%	
			քաղաք	գյուղ
Ընդամենը	395	126	19.7	12.2
ք. Ստեփանակերտ	157	54	34.4	-

	Ընդամենը գույգեր	այդ թվում՝ վարում են առանձին տնտեսություն որից՝ ըստ բնակավայրերի, %		
		ընդամենը		
			քաղաք	գյուղ
Ասկերան	42	8	2.4	16.7
Հաղբուք	26	10	11.5	26.9
Մարտակերտ	57	15	8.8	17.5
Մարտունի	54	10	9.3	9.3
Շահումյան	9	6	11.1	55.6
Շուշի	20	8	35.0	5.0
Քաշաթաղ	30	15	6.7	43.3

Շահումյանի շրջանում հետազոտությանը ընդգրկված ամուսնական գույգերի 55.6տոկոսը, Քաշաթաղի շրջանում՝ 43.3տոկոսը, Հաղբուքի շրջանում՝ 26.9տոկոսը, Մարտակերտի շրջանում՝ 17.5 տոկոսը, Ասկերանում՝ 16.7տոկոսը կազմում են գյուղական վայրերում բնակվող ինքնուրույն տնտեսություն վարողները: Իսկ քաղաքային բնակավայրերում բնակվող ինքնուրույն տնտեսություն վարողներ են հանդիսանում Շուշիի շրջանում հետազոտությանը ընդգրկված ամուսնական գույգերի 35.0տոկոսը, Հաղբուքի շրջանում՝ 11.5տոկոսը, Շահումյանում՝ 11.1տոկոսը:

Գծապատկեր 3.6.3. Ընտանիքների բաշխվածությունն ըստ զբաղեցրած սենյակաների թվի, %




Ամուսնական գույգերի 29.9 տոկոսը բնակվում է 3 սենյականոց, 26.3տոկոսը՝ 2 սենյականոց, 23.6 տոկոսը՝ 4 սենյականոց, 14.4 տոկոսը 5 և ավելի սենյականոց, իսկ 5.8 տոկոսը՝ մեկ սենյականոց բնակելի տանը: Առանձնատանը բնակվողների 29.8տոկոսը բնակվում է 4սենյականոց, 26.5տոկոսը՝ 3 սենյականոց, 22.3տոկոսը՝ 5 և ավելի սենյականոցներում: Բազմաբնակարան շենքի բնակարանում բնակվողների 40.9տոկոսը բնակվում է 3սենյականոց, 38.7տոկոսը՝ 2սենյականոց, 15.1տոկոսը՝ 4 սենյականոց բնակարաններում:

Աղյուսակ 3.6.2. Ընտանիքների բաշխվածությունն ըստ կացարանի տեսակի և զբաղեցրած սենյակաների թվի


	Ընդամենը	սենյակաների թիվը				
		1	2	3	4	5 և ավելի
Ընդամենը	395	23	104	118	93	57
առանձնատուն	238	9	42	63	71	53
բնակարան բազմաբնակարան շենքում	93	3	36	38	14	2
ժամանակավոր կացարան	29	4	9	7	7	2
այլ կացարան	35	7	17	10	1	-

Փճապատկեր 3.6.4. Ընտանիքների բաշխվածությունն ըստ կացարանի տեսակի և զբաղեցրած սենյակների քվի, %



Հարցմանը մասնակցած ամուսնական զույգերի 19.3 տոկոսը զբաղեցնում է 41-50 քառ.մ բնակելի մակերես, 14.7տոկոսը՝ 61-70քառ. մ, 14.2տոկոսը՝ 51-60 քառ. մ, 11.1 տոկոսը՝ 100 քառ. մ-ից ավելի բնակելի մակերես:

Փճապատկեր 3.6.5. Ընտանիքների բաշխվածությունն ըստ բնակելի մակերեսի, %



Մինչև 15քառ. մ բնակելի մակերես զբաղեցնող ամուսնական զույգերի 42.9 տոկոսը բնակվում է առանձնատներում, 57.1 տոկոսը՝ այլ կացարաններում, 61-70 քառ. մ բնակելի մակերես զբաղեցնող ամուսնական զույգերի 41.4տոկոսը բնակվում է բազմաբնակարան շենքի բնակարաններում, 39.7տոկոսը՝ առանձնատներում:


Աղյուսակ 3.6.3. Ընտանիքների բաշխվածությունն ըստ կացարանի տեսակի և բնակելի մակերեսի, %

	Ընդամենը	Առանձնատուն	Բնակարան բազմաբնակարան շենքում	Ժամանակավոր կացարան	Այլ կացարան
մինչև 15 քառ.մ	100.0	42.9	-	-	57.1
15-20 քառ.մ	100.0	33.3	25.0	16.7	25.0
21-25 քառ.մ	100.0	50.0	-	25.0	25.0
26-30 քառ.մ	100.0	36.0	36.0	16.0	12.0
31-40 քառ.մ	100.0	39.4	42.4	3.0	15.2
41-50 քառ.մ	100.0	68.4	18.4	6.6	6.6
51-60 քառ.մ	100.0	55.4	25.0	10.7	8.9
61-70 քառ.մ	100.0	39.7	41.4	8.6	10.3
71-80 քառ.մ	100.0	76.7	20.0	3.3	-
81-90 քառ.մ	100.0	73.7	21.0	5.3	-
91-100 քառ.մ	100.0	87.0	13.0	-	-
100 քառ.մ-ից ավելի	100.0	90.9	4.5	2.3	2.3

	Ընդամենը	Առանձնատուն	Բնակարան բազմաբնակարան շենքում	Ժամանակավոր կացարան	Այլ կացարան
Ընդամենը	100.0	60.3	23.5	7.3	8.9

15-20 քառ. մ բնակելի մակերես զբաղեցնող ամուսնական զույգերի 75 տոկոսը և 25 տոկոսը, 21-25 քառ. մ՝ զբաղեցնողների 50-ական տոկոսը, 26-30քառ. մ՝ 4.0տոկոսը և 96.0 տոկոսը բնակվում են համապատասխանաբար 1 և 2 սենյականոց կացարաններում: 2 սենյականոց կացարանում են բնակվում 31-40քառ. մ բնակելի մակերես զբաղեցնող ամուսնական զույգերը : 100 քառ. մ-ից ավելի բնակելի մակերես զբաղեցնող ամուսնական զույգերի 52.3 տոկոսը բնակվում է 5 և ավելի սենյականոց, 34.1 տոկոսը՝ 4 սենյականոց, 13.6 տոկոսը՝ 3 սենյականոց կացարանում :

Գծապատկեր 3.6.6 Ընտանիքների բաշխվածությունը ըստ սենյակների թվի և բնակելի մակերեսի, %



1 շնչի հաշվով 1 սենյականոց կացարանում բնակվողների կառուցվածքում 52.2տոկոսը զբաղեցնում է մինչև 6 քառ. մ, 43.5տոկոսը՝ 6-10 քառ. մ, 4.3տոկոսը՝ 10-15քառ. մ բնակելի տարածք: Մինչև 6 քառ. մ բնակելի մակերես են զբաղեցնում նաև 2 սենյականոցում բնակվողների 16.3տոկոսը, 3 սենյականոցում՝ 2.6տոկոսը, 4 սենյականոցում՝ 5.4տոկոսը: 30քառ. մ-ից ավելի բնակելի մակերես են զբաղեցնում 2սենյականոցում բնակվողների 1.9տոկոսը, 3սենյականոցում՝ 4.3 տոկոսը, 4 սենյականոցում՝ 5.4 տոկոսը, 5 և ավելի սենյականոցում՝ 15.8 տոկոսը:

Հետազոտության արդյունքներով պարզվել է, որ ամուսնական զույգերի 83.0 տոկոսը ունեն, 17.0 տոկոսը չունեն սեփական կացարան, այդ թվում 37.3 տոկոսը՝ բնակվում է վարձով:

Աղյուսակ 3.6.4. Զույգերի բաշխվածությունը ըստ կացարանի սեփականության իրավունքի

	Ընդամենը	այդ թվում՝		
		ունեն սեփական բնակարան	չունեն սեփական բնակարան	որից՝ բնակվում են վարձով
Ընդամենը	395	328	67	25
ք. Ստեփանակերտ	157	122	35	19
Ասկերան	42	39	3	-
Հաղրուք	26	21	5	-
Մարտակերտ	57	50	7	-
Մարտունի	54	49	5	3
Շահումյան	9	3	6	1
Շուշի	20	16	4	2
Քաշաթաղ	30	28	2	-

Քաշաթաղի շրջանում բնակվող հետազոտությամբ ընդգրկված ամուսնական զույգերի 93.3տոկոսը, Ասկերանի շրջանի՝ 92.9տոկոսը, Մարտունու շրջանի՝ 90.7տոկոսը, Մարտակերտի շրջանի՝ 87.7տոկոսը, Հաղրուքի շրջանի՝ 80.8տոկոսը, Ստեփանակերտի՝ 77.7տոկոսը ունեն սեփական կացարան: Ստեփանակերտ քաղաքում սեփական կացարան չունեցող ամուսնական

գույգերի 54.3 տոկոսը, Մարտունու շրջանում՝ 60.0 տոկոսը, Շուշիի շրջանում՝ 50.0 տոկոսը, Շահումյանի շրջանում՝ 16.7 տոկոսը բնակվում են վարձով: Մնացած շրջաններում վարձով բնակվող ամուսնական գույգեր չեն արձանագրվել:

Աղյուսակ 3.6.5. Վարձով բնակվող ընտանիքները ըստ ամսական վարձավճարի չափի շրջաններով

	Ընդամենը	այդ թվում՝ ամսական վճարում են, դրամ					
		մինչև 20000	20001-30000	30001-40000	40001-50000	50001-60000	60001-70000
